



ՍԱՐԱՆ ԱՎԱԻԹագաւորաց վիճակն նախանձելի էր ամենուն, և կ'ընդունէր սուէր ընդհանրապէս, Թագաւորի պէս երջանիկ: — Բայց, աւաղ, արդ որչափ փոխուեր են ժամանակը: Տես, չենելով ներկայապէս թէ որչափ Թագաւորի պէս այրիք, անմխիթարք, իրենց շուրջնայ սղաւորի թողուն կ'անցնին ժամանակիս փոթորկաց միջէն. աւելի էլ մարտիս չէր լիներ ըսել. Թագուհւոյ մը պէս թշուառ:

Դորա գրեթէ ամէնքն ալ կրնան կրել մատենուն վրայ, (այլ ևս փշուռած լինելով իրենց ամուսնական կապն), մատանի մը նման Բովսեփ-դը-Մետտի իւր աքորտանաց միջոց կրած մատանոյն, որոյ մէջտեղի խորշն արտասուաց յի՞ մ'ունէր մէջը... ժամանակաւ ալ դառն կաթիլ մի արտասուքն ցամաքեցաւ իւր փորիկ զոչարեայ խորշին մէջ, սակայն մեծ խմտաստաւէրն կը թալար միշտ անոր կիկիլ դառնութիւնը՝ արտաւանանց ներքեւ և իւր սրտին մէջ:

Սաղ անցամաքելի արտասուքն Թուի թէ Թագուհեաց յատուկ նակատագիրն է: — Ճանչցնէր էք երբէք երջանիկ Թագուհիներ, փնտռեցէք պատմութեան մէջ, փնտռեցէք դարուց ընթացքին մէջ. ուրիշ բան պիտի չգտնէք՝ բայց միայն արտասուք...

Ո՛րչափ այրիք և սղաւորք նոյն իսկ մեր դարուն մէջ:

Նշախ և առաջ, երկուս այրիք մեծին Նշապուշտին « Բովսեփին », որ ամուսնութեան լուծմամբ այրիացաւ, և Մարիամ-Լուիզ՝ յետ կակծալի մահուան ի Ս. Հեղինէ: Բետոյ այրին Անգուլեմի դքսին, որ Լուգուրիկոս ԺՉի դուստրն էր, և Տամարի բանտին մէջ սկսած կեանքը աքորտանաց մէջ կ'ընէր, և իւր ամենայն արկածից և փոփոխութեանց մէջ երկուս յիշատակարտութեանց ցաւազին տեսիլը անընդհատ պահեց ի խորս սրտին: Ապա այրին Բերբիի դքսին, որ իւր աքորտեալ որդւոյն հետ օտարութեան մէջ անցուց իւր կեանքը. նոյն պէս Ուրէշանու դքսի այրին, որ Բեղափոխութեան յանկարծակաւ հարուածով մը ոչնչացաւ. հուսկ յետոյ այրին Լուգուրիկ-Փիլիպպոսի, որ ծուրը դրաւ լսելով իւր որդւոյն ահաւոր մահը. և գոչեց, « Աստուած իմ,

չեմ ըսեր թէ չափազանց է, այլ շատ է » և ուղեց որ զինքը սե. բրդեայ զգեստովը Թագին, զոր կը կրէր ի 24 փետրուարի 1848 ամին, երբ Թողուց Տիւլլըրի պալատը, որպէս թէ զաղտնի մտածութիւն մը զինքն ի քաւութիւն կը յորդորէր:

Բայց Թողունը մեռեալները, և միայն ողջ լնալ տեսնել. և մտածելք թէ մեծ նաւ տարաբաժան Դամբանական նաւից՝ որչափ արդեօք պիտի արգահատէր, աղէտից և յեղափոխութեանց դարուն մէջ, տեսնելով այնքան արտասուք՝ զորս կը բովանդակէ Թագուհեաց ալքն:

*
* *

Այս այրիներէն երեքը տակաւին դահու վրայ են մարդկային փառաց բովանդակ շքեղութեամբ. և օտակայ իրենցմէ մը մէկը պիտի յիշատակէր փութով՝ այն կորուսած երջանակութիւնը վերստին գտնելու համար:

Վիկտորիա, որ ի ձեռին ունէ՛ իբր Հինաւորց աստուածուհի մը՝ աշխարհիս ամենընա դարձակ պետութեան գաւազանը, անմխիթար կ'ապրի իւր ամենայն փառաց մէջ, յորմէ հետէ կաթնագին փեսայն աներեւոյթ եղաւ ի պալատանց, ուր ինքն Հինայ այլ ևս անյայտ կեանք մը կ'անցընէ. միշտ սգազգեստ է, խոյս կու տայ ունայն հանդէսներէ և ի պարտուց իւր պաշտաման, և կ'ամփոփուի ըսին առանձնութեանց մէջ, ուր անցեալ յիշատակաց դառն ուրախութիւնները կը մտաբերէ: Մտաց երազներով կը չրլի պարտեղներուն մէջ, ուր երբեմն ի միասին կը քայլէին և ուր իւր ալքն ի գուր կը փնտռէ բացակայ սիրեցելոյն հեաքերը. կը նկատէ իւր փեսային սիրելիագոյն ծաղիկները. իւր անձին յատուկ յիշատակարաններ կը գրէ իւր մանկանց ու սուցանելու համար՝ իրենց հօրն ամենայն ձիրքերը. և երեկոյեան երբ կ'ազատին պետութեան հոգեբէն, կ'ընթերցեն նա այն գորովալ իւր Խորհրդածոյնի մէջ յորմէ մտաւ և յաւերժեան հետեւին, յորս կը գարթնուն և կը վառին իւր անկակաւութիւնը զինքը դարձեալ տեսնելու:

Խնամակալ Թագուհին Սպանիոյ, բաժնունելով կանխահաւ մահուամբ սիրելի և վայել

լուչ իշխանէն, որոյ առոյգ հասակին շնորհքն զփողոցուղը իրեն ձգեր էր. և ահա ինքն, Աւստրիացի լինելով, այրի և միայնակ զրուսնուեցաւ նախանձորոք ազգի մը մէջ մանկան մը հետ, որոյ փղբորիկ ձեռքն գեւ շատ տկար էր կարողու իր արքունական դաւազանը բռնելու համար:

Այնուհետեւ տարեցաւ նա միայն իւր փղբորիկ թագաւորին համար, իւր պարտոցը մէջ կեդրոնացած, անողորմ, անդեղեղեն, խառտ կրօն կեանք մը վարելով այն միջին բնակարանաց մէջ, ուր անցեալ փառաց սուգը քող մ'այլ կը յաւելու ներկայ տխրութեանց և ապագային տագնապներուն վրայ:

Հոյանդայի թագուհին, դերարեքի նոյնպէս գեղեղուն գահու մը վրայ, գողգոյուն պահապանն է փափկիկ գոտեր մը, որ կ'ամբողջէ իւր մէջ Նասանթրոն բովանդակ արիւնը, մինչ ահաւոր գրացի մը մտադիր կեցեր է յարձակելու ինչպէս բազէ մը շիկահաւին վրայ:

Ահաւասիկ փյապսակ այրեաց կեանքը, որք տակաւին գահու վրայ բազմած են: Որ պիտի խորին և գործակալի կարեւորութիւն չեն ազդեր ողբա, որ մարդկային բարձրութիւններէ և լուսափառ ուրախութիւններէ կործանեցան զինկարծ յանդունդս և ի յաւիտենական գիշեր ցաւոց և տխրութեան: Քանիներ ասոնց միջէն կարող են ըսել անցորդաց՝ Ս. Գրոց ցաւագին մօր հետ. Հայեցաւ և Դեմետրիոս ինչն ցաւ ըստ ցաւոց յուս:

* *

« Հրաշալի գեղեցկութեամբ տիկին մը՝ սիրուն ձեռքով կայսրուհի եղեր էր բովանդակ Ռուսիոյ. Աղեքսանդր Բի սիրտը բարձրացրեր էր զինքը յայն բարձրապատիւ գահ, ուսկից կրնար տեսնել 80 միլիոն մարդիկ խոնարհեալ յոտս իւր:

Ուրնականաց ռումբ մը կը պայթի. կայսրըն կ'իյնայ, և երկկան կայսրուհին նոյնպէս կ'իյնայ միևնոյն հարուածով լաիկա, խուած, և կը պարտաւորուի իւր տաղնապետ ուղտոց հետ երթալ ամայի դաշտերէ անցնելով, հեռաւոր հիւրընկալութիւն մը փնտրելու կեղծ անուամբ:

Ուրիշ տիկին մ'այլ նոյնպէս գեղեցիկ և ծաղիկ հասակի մէջ տակաւին, դուստր և քննի թագաւորաց, զոր ազնուական և գողտրիկ սէր մը, իւր հօրը փղբորիկ տէրութեանէն հաներ և կողակից ըրեր էր Աղեքսանդր Գ. կայսեր, արժանապէս կը գրաւէր մեծին կատարներէ տեղը, և իւր վայելչութեամբ կը լուսաւորէր Ռուսական արքունիքը, որ

իրաւամբ արեգակն կը համարուի արգ. Եւրոպայի, երբ յանկարծ անակնկալ հիւանդութիւն մը գետին կը տապալէ իրեն մօտ կայսերական վիթխարի հսկայն, որ կը սիրէր զինքը միշտ եռանդուն սիրով, և դազարին քով կ'ոլնչացնէ զնա: Եւ հազիւ թէ այն դազաղը, որոյ կ'ընկերէ աղէխարը ցաւերով լայնածաւալ տէրութեան մէջ, բարեպաշտ սգով, կը զետեղէ իւր հանգստարանին մէջ, կը տոխպուրի իսկ և իսկ ներկայ գտնուի ուրիշ նոր գեաւահասակ և զուարթ կայսրուհոյ մը գահակալութեան, փութով ապա աներեւոյթ ըլլալու համար իւր սգաւորի քոշերով միջին ստուերի մը մէջ, ուսկից այլ ևս պիտի չ'ենէն... »

Որչափ այլ սրտանմիկ և աղէխարը ըլլան ողբա, բայց չեն սպառեր բովանդակ ցաւոց բաժակը. կարելի է ցան անելի ևս անցնել և ուրիշ անելի կակծեցուցիչ վէրքեր գտնել:

Հին թատրերգութիւնն կը ներկայացնէ՞ արդեօք անելի ազգու և անելի աղետալի վիճակ մը քան Փրեդերիկ կայսրուհոյն և Ստեփանն աւագ դքսուհոյն միեակը:

Առաջին կողակից գերման Մարկոս-Աւրելիոսի, զրազնա էր, հմուտ արուեստից, լի գաղափարներով և մտածութեամբ, որ յետ երկու ժամանակ սպասելու զահուսն, և ահա հազիւ թէ բարձրանալու վրայ էր, յանկարծ անդարմանելի հիւանդութենէ մը վարակելով ամուսինն՝ իւր սրտին բոլոր ակընկալիքը անդնդատող ըրաւ ի գերեզմանի: Եւ այն ժամանակէն ի վեր կը թափառի նա անծանօթ և մոռացեալ, առանց զօրոյ և նպատակի այն կայսրութեան մէջ, ուր բազմաբեղուն ձեռնարկներ կ'երազէր:

Միւսն, ծաղիկ հասակի մէջ ամուսնացեալ Եւրոպիոյ փառապանծ գահերէն միոյն նշաւնաւոր ժառանգին. աւագ-դուռն Հռոմոյիին հետ, որ բանաստեղծ և հանգստեղ էր և յանկուցիչ այլոց, և կարծես կը խոստանար Հապարուրդի հին ազգատուն մը վերստին կենդանացնել, և անկ կը լսէ յանկարծ թէ մատուցել է իւր ամուսինն և թողուեր. սիրտը վիրաւոր և նուաստացեալ ոլնչացած կը տեսնէ իւր բովանդակ ապագայն՝ Մէյերլինդի ահաւոր արկածովը. կայսրութեան ժառանգ մը տալէ առաջ կը խորտակի նա յիրաւի իւր զարնանազաւոր ատուրց մէջ, յորում ամենայն ինչ բերկրութիւն է և հանդէս... »

Հարկ է արգեօք այս երկու ստուերաց քով յաւելուլ երրորդ մ'այլ, անելի սրտանմիկ, որ գոժան և սեւեռեալ աչքը սպիտակակեր և յիմարութեան կնիքն ի ճակատին, պարսիզի մը ամայի ծառուղեաց մէջ կը շրջի միայնակ, ուր թուի փնտալ մեռելոյ մը ուրուականը:

Շարուն թշուառ կայսրուհին է, որ քաղաքական յուզմանց զոհ լինելով խելագարեցաւ. իւր յիմարութեան վայրկեաններուն մէջ ըլլաւ Մաքսիմիլիանոս կը կանչէ, և մերթ ընդ մերթ կենդանով հրաքանի հեռաւոր հարուածներ կարծես կը լսէ հովուն ձայնին մէջ.....

Իսկ Նապոլէոն Գի այրին, ընկնել այն պիտի թշուառութեամբ մը, որ կուտակցութեանց ռիսկալորութեան ոգին կը հանդարտեցնէ, հարուածեալ միանգամայն իբր հարս, իբր կայսրուհի, իբր մայր, ծանրացեալ տաւրիքով և վշտով, կը պանդխտի արդ օտար միգրամած երկնքի մը ներքեւ երկու գերեզմանաց մէջ, ուր թաղուած են իւր երկրաւոր սիրոյն առարկայքը:

Գարձեալ Նապոլէոն իշխանի այրին, այն սրբուհին որ զոհ եղաւ քաղաքական կասկածելի հաշիւներու, լքեալ նախատեալ և աքսորեալ ի Պարիսէ քաղաքական աղետոյց պատճառաւ. աքսորեալ միանգամայն ի Հոլով մայ իւր հաւատքին պարտականութեանց պատճառաւ, իւր տխրագին օրերը աւարտելու վրայ է վանքի չափ խառակրօն միայնութեան մը մէջ:

Նոյնպէս կոմսուհին Պարիսու, ընկաւ ու ժառպառ ահաւոր հարուածով մը յետ երկու տարի ապրելու դէմ առ դէմ անողորմելի մահուան. այսուհետեւ ուրիշ մարդկային մը խիթարութիւն չունի, բայց միայն վսեմ հո-

գեալքի մը յիշատակն. և կենօք չափ դատաւարտեալ է թափառիլ Վիլլամանրիկի տապանատուններէ Ուէյբրայնի (Weybridge) տապանատունը, Դրէյլի (Dreux) յուղարկուորութեան մատրան մէջ, ինչ որ ալ ըլլայ ապագայն. և մշտնջենաւոր սոյոյ դատաւար տեղով ինքզինքը, — իւր վեհափառ մօրը նման, որ այնպիսի ցաւով և արտասուօք լի էր, որ մտահաւար կը կոչէր ինքզինքը երկնաւոր օրինակին նման՝ Մայր եօթն ցաւոց..

Եւ վերջին օրերուս Նէապոլսոյ այրի թագուհին, որ ի Գայետա (Gaëta) ոմբակաց հարուածներու ներքեւ դիւցազն հանդիսացաւ, գահէ և փառքէ զրկեալ այնպիսեաց ձեռքով. որոնք պէտք էին զինքը պաշտպանել, ոտի պուած է արդ ի Գաղղիա անպաճոյճ սենեկի մը մէջ անցընել կեանքը, յետ գահակալելու Նէապոլսոյ շքեղ և արեգաւէտ պալատանց մէջ:

Այս ամենայն անձինք չունին այլ ևս ապագային երազներն և վայելք այլ միայն անցելոյն յիշատակները: Ամենքն ալ կը վերաբերին անցելոյն, այնպիսի սրտերու. օրք այլ ևս չեն բարայտեր, չիլեալ տանց և անհետացած իրաց:

Թշուառ թագուհիք, որոց վիճակն այնչափ նախանձելի էր: Ներկայապէս կու լան և կ'աղօթեն, մարդկային մեծութեան և փառաց ունայնութիւնը հաւատարմով մեզ:

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԿԵՆՑԱՂԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Տարոյն առաջին օրն ի Բեռլին, և տունք գարնէրի իրա ազգային հիմնարկութիւնք:



Ստեղծութիւնները իտալացի հանապարհնորդէ մը կ'առնուէր, որ յունուարի առաջին օրն անձամբ ներկայ և ականատես եղած ըլլալով այս պէս կը ստորագրէ:

Երկաթուղիք օրէ օր կը շատնան, հեռագրատունք կը յաճախեն, բայց և այնպէս ժողովուրդք զիրար շատ քիչ կը ճանչնան և շատ ծուռ գաղափարներով զիրար կը դատեն: Այսպէս սովոր են իտալացիք երևակայել զԳերմանացիս իբր լուրջ և ծանրախոհ ժողովուրդ մը, ծանրաբարձ և աղմկի թընամի: Ինչ ծուռ գաղափար:

Գերմաների 31ին կէս գիշերուն մէկն որ ներկայ գտնուէր Բէռլինի մեծ ու կեդրոնական փողոցներուն մէջ, և զլսաւորապէս ի փողոցն Unter den Linden, կրնար խաբուելով այնպէս կարծել ինչպէս թէ ի Նէապոլիս ըլլար: Ոչ իտալիոյ հիւսիսային քաղաքաց բարեկենդանը և ոչ միջին իտալիոյ քաղաքաց աշխատային մեծ հանդէսները կըրնան գաղափար մը տալ այն հսկայակերպ տօնական ցնծութեան որ Ս. Սիդքեստրուսի գիշերը Բեռլինի փողոցները կը ծովացնէ: Հին սովորութեան մը հետեւելով ժողովուրդը՝ մեռնող ասարւոյն վերջին ժամը՝ դուրս